




Հանրագիտակ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ



ԱՌԱՋՆՈՐԴ ԼԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




Մի 8^{րդ}



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ





ՀԱՅԿԱՊԵՏԱԿԱՆ
ՀԱՅԿԱՊԵՏԱԿԱՆ
ՀԱՅԿԱՊԵՏԱԿԱՆ



ՀԱՅԿԱՊԵՏԱԿԱՆ



ՀԱՅԿԱՊԵՏԱԿԱՆ

ՀԱՅԿԱՊԵՏԱԿԱՆ




8

ՀԱՅԿԱՊԵՏԱԿԱՆ



ՀԱՅԿԱՊԵՏԱԿԱՆ

ՀԱՅԿԱՊԵՏԱԿԱՆ



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԵՍ هانراكيداق HANRAKIDAGUE

ՇԱԲԱԹԱԿԱՆ مجموعة علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 8 || 22 ՓԵՏՐՈՒԱՐ 1903

ՄԱՆԿԱԿԱՆ ԹԻՇԱՏԱԿՆԵՐ

ՀԱՅՐԻԿ

Դպրո՛ց՝ զղափնե՛ր, դռ՝, որոնց կայսառ
Հոգին՝ ուսումի խանդով կը վառի,
Իսկ դուք, պզտիկներ, խաղցե՛ք անդադար,
Դուք անգե՛ս ե՛ք դեռ զերդ ծիսն անսառի:

Զուարթ, երջանիկ, ուսնի՛ք թե խաղա՛ք,
Հայրիկն ունի՛ք միշտ պաշտպան ձեռն ետին,
Թոչսուք խաղցե՛ք, օ՛ն, սիրասուն զղա՛ք,
Հայրիկն է արթուն, կը ֆրսնի անդին:

Զեզ համար, զղա՛ք, պարկեշտ ու բարի,
Կը քափուի՛ն արդար ֆրսին՛ն հայրիկին,
Զենե՛կ անե՛ն մեկն անոր քող փարի,
Որ խոյս տան հոգերն անոր ցաւագին:

Արտաւոցե՛ք, զղա՛ք, օ՛ն, հայրիկին դեմ,
Տեսե՛ք շուկայէն ան կը դառնայ տուն,
Թող սիրեն հայրիկին բացուի ջիւնը եղեմ,
Զեր համբոյրներէն՝ ուրախ ու ժպտուն:

Արտաւոցե՛ք, հայրիկն իր կուրծքին վրայ
Գրգռե՛ք ձեզ, շոյե՛ք խայտալիկ արքիո,
Բաղը յուզումներով քող ան թրուրսայ,
Մոռցած սաժանի հոգերն ու կրնճիո:

Փոխարե՛ն՝ հազար ապրի՛ք դուք, զղա՛ք,
Զեր արտիկն է տաք քոյն մը գորովի.
Խօնջ հոգ թե այսօր զրհաս ե՛ք ու խալ,
Վաղն ըլլա՛ք պիտի ուժեղ. կորովի:

Ապրիլի դուր հազար, զի զգալ տակաւ
Թե ո՛ւր հայրիկին ճիգեր կը յանգին,
Անոր ճամբուն վրայ կը շարուի կարգաւ
Լնծայել սիրոյ ձեր զանձերն անգին:

Ապրիլի դուր, սրղաֆ, ձեր ըղձանքն ե միշտ՝
Սրբել քրտինքներն անուշ հայրիկին,
Ու երբ ծերութեան ընկձե զայն խոր վիշտ,
Սփոփե՛ք պիտի իր սիրեն ու հոգին:

Ձեզի հետ բոլոր սրղաֆն ալ ապրին,
Որոց սիրտն աննենգ սիրով ե ծաղկեր,
Ու պատկառանքով՝ շիկնո՛ս ու խորին՝
« Հայրիկն ե, կ'ըսեն, Աստուծոյ պատկեր »:

ՄԿՐՏԻՉ Ա. ԹՈՒՐԵԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԵԹՈՏՆԵՐ⁽¹⁾

ԱՐԻՍՏՈՒԿԷՍ Ե. ՊՈՅՈՒՆՅԱՆ

Խնդիրը հիմա ոչ միայն ի տես դնել է, այլ ապացուցանել,
ինչպէս որ յաճախ կը պատահի:

Երկու հակառակ ճամբայ կը ներկայանայ մեր մտքին առջեւ.
ընծայական (deductif) եւ մակաձական (inductif): Ընծայութիւնը,
ըսինք թէ, ընդհանուր ճշմարտութիւններէն մասնաւոր ճշմարտու-
թիւններու կ'իջնէ. որոնք նախորդներուն մէջ ամփոփուած են:
Մակաձութիւնը ընդհակառակը, մասնաւորէն ընդհանուրին կը
բարձրանայ: Այս կրկնակի սկզբունքին փոխադարձաբար կը հա-
մապատասխանեն ընծայական եւ մակաձական մեթոտները:

Ընծայական մեթոտով սկզբունք մը կ'արտայայտեն՝ յետոյ
զայն օրինակներով կ'ապացուցանեն: Երկրաչափութեան մէջ այս
մեթոտն է գործածուածը: Նախ տեսութիւնը կ'առաջարկեն, յե-
տոյ անոր վրայ կը վիճին եւ օրինակ մը առնելով կ'ապացուցանեն
զայն: Սակայն ենթադրենք թէ տարրական ուսուցման պատկա-
նող որ եւ է մէկ դասն է, ինչպէս քերականութեան դաս մը, ուր
ենթակային եւ բային համաձայնութեան վրայ կը խօսուի, նախ
կանոնը կը յայտնեմ ըսելով — Ենթական թուով եւ դէմքով բա-

յին հետ կը համաձայնի — այնուհետեւ օրինակներու կ'անցնիմ. Անիկա այսօր գրեց նամակը — Անիկա ենթական եզակի երրորդ դէմք է. գրեց բայն ալ եզակի երրորդ դէմք է. Ես այսօր գիւղ պիտի երթամ. Ես ենթական եզակի առաջին դէմք է, պիտի երթամ բայն ալ եզակի առաջին դէմք է. Դուք այն տեղ մի' երթաք: — Դուք ենթական յոգնակի երրորդ դէմք է, մի' երթաք բայն ալ յոգնակի երրորդ դէմք է.

Թուաբանութենէն օրինակ մը.

Երբ երկու կոտորակներ իրարու հետ բաժնենք՝ նախ եւ առաջ կանոնը կ'ըսենք, բաժանելի կոտորակը պէտք է բաժնել չըլեալ բաժանարարով. Օրինակ $\frac{3}{4} : \frac{2}{5} = \frac{3 \times 5}{4 \times 2} = \frac{15}{8} = 1 \frac{7}{8}$. և յետոյ կը սկսինք ապացուցանել թէ ինչո՞ւ համար բաժանարար կոտորակը չըլեցինք եւ յետոյ բաժանելի կոտորակը անով բազմապատկեցինք:

Գիտութենէն օրինակ մը.

Հնծայական մեթոտին համեմատ՝ նախ կ'առաջարկեմ սկզբունքը — Հեղուկի մէջ դրուած ամէն մարմին հեղուկին մէջ ընծած տեղւոյն չափ իր կշռէն մաս մը կը կորսնցնէ — Յետոյ ապացուցանելու համար պէտք եղած գործիքը կ'առնեմ եւ փորձի կը սկսիմ եւ հետզհետէ յաջորդաբար գործողութիւնները կը կատարեմ և իբր հետեւութիւն առաջուրնէ յիշած սկզբունքս կը կրկնեմ, այս բացատրութիւնները ամբողջացած կ'ըլլան երբ տղաքներուն յիշեցնեմ թէ միեւնոյն սկզբունքին հետեւութեամբն է որ ծովու բաղնիքին մէջ իրենց մարմինները աւելի թեթեւ կը զգան, և ջուրին յատակէն վեր բարձրացող մարմին մը աւելի թեթեւ է քան երբ ազատ օդին մէջ ըլլար:

Ե. — Մականական մեթոտով ասոր հակառակ ուղղութեամբ կ'ուսուցանեն. քիչ մը առաջ առաջարկած քերականութեան կանոնը փոխանակ առաջուրնէ ըսելու, օրինակներ կ'առնեմ — Ես այսօր գիւղ պիտի երթամ — Անիկա այսօր գրեց նամակը — Դուք այստեղ մի' երթաք: Այս օրինակներով պիտի հաստատեմ Ես ենթական է, եզակի առաջին դէմք. նոյնպէս գրեցի բայը եզակի առաջին դէմք է. այսպէս օրինակները որչափ չափանենք. դարձեալ նոյն ապացոյցները պիտի տանք (սակայն միշտ պարզ օրինակներ, միշտ բացառութիւնները ետքէն աւանդելու է). Ակներեւ է որ այս կերպ բացատրութիւններու մէջ կանոն սկզբունք չիկան, այլ ապացոյցներ, փաստեր, օրինակներ, որոնց մէջէն արդէն աշակերտը կը հանէ իր սեփական ոյժով կանոններ, սկզբունքներ, հետեւութիւններ, ասոնք են ուղղակի իրենց համոզումին արդիւնք քան թէ ուրիշներ:

Թուաբանութենէն

$\frac{3}{4} : \frac{2}{5}$ ով բաժնելու ժամանակ, առաջուրնէ կանոն չեմ ըսեր, այլ աշակերտներուն առջեւ օրինակը գրելով հետզհետէ աստիճանաբար կը թելադրեմ այսպէս,

$\frac{3}{4} - \frac{2}{5}$ ով բաժնել ըսելը, գտնել այնպիսի թիւ մը, որ $\frac{2}{5}$ ով բազմապատկելով պիտի ունենանք $\frac{3}{4}$ բաժանելի թիւը, և այն թիւն ալ քանորդն է, այն պատճառով թէ եթէ բաժանարարը քանորդով բազմապատկենք յառաջ կուգայ բաժանելի։ Ուրեմն

$$\Phi \times \frac{2}{5} = \frac{3}{4}$$

Քանորդը $\frac{2}{5}$ ով բազմապատկել ըսելը քանորդին $\frac{2}{5}$ մասը առնել ըսել է, հետեւաբար կ'ըսեմ

$$\text{Եթէ քանորդին } \frac{2}{5} \text{ մասը} = \frac{3}{4} \text{-ին}$$

$$\gg \frac{4}{5} \text{ մասը} = \frac{3}{4 \times 2} \text{-ին}$$

$$\gg \frac{5}{5} \text{ մասը} = \frac{3 \times 5}{4 \times 2} \text{ որ է ամբողջ քանորդը։}$$

Այս վերջին $\frac{3 \times 5}{4 \times 2}$ արդիւնքը քննելով կը տեսնենք որ $\frac{3}{4}$ բաժանելի կոտորակը $\frac{5}{2}$ կոտորակով բազմապատկուած է, որ $\frac{2}{5}$ բաժանարար կոտորակին չըլեալն է, ահաւասիկ այս վերջնական արդիւնքէն յայտնի կերպով աշակերտները կը հասնին հետեւեալ գործնական կանոնին. — կոտորակը կոտորակով բաժնելու համար, բաժանելի կոտորակը պէտք է բազմապատկել չըլեալ բաժանարարով։

Արքիմէտէսի սկզբունքը ապացուցանելու համար տղաքներուն յիշեցնել կուտամ այնպիսի մանր մունր իրողութիւններ, որոնք աննշմարելի չեն թուած. ինչպէս թէ ծովուն մէջ իրենց մարմինները աւելի թեթեւ կըզգան, նոյնպէս թէ դոյլ մը ջուրը հորին յատակէն վեր քաշած ատեն աւելի թեթեւ է և երբ ջուրին երեսէն վեր ելլէ այնքան աւելի կը ծանրանայ, ասով ալ կըրնանք հաստատել թէ հեղուկի մեջ դրուած ամեն մարմին իւ կշիռէն մաս մը կը կորսնցնէ։

ՊԱՐԾԵՆԿՈՏՈՒԹԻՒՆ

Սովորատ տեսնելով որ Ազգիբիադ աշակերտն իրեն ստացուածներուն ու գեղեցիկ կալուածներուն վրայ կը հպարտանայ, Յունաստանի աշխարհացոյց մը բերել տուաւ ու « Ո՞վ պատանի, ըսաւ, ցուցո՛ւր ինծի սա տախտակին վրայ, ո՞ր է Ատտիկէ։ — Ահաւասիկ։ — Յուցուր արդ թէ՛ ո՞ր են քու կալուածներդ ու գեղեցիկակերտ ամարանոցներդ։ — Չեմ տեսներ, չկան։ — Ուրեմն, այսպէս քանի մը թիւ գետին, կրկնեց իմաստասէրը, որ յիշատակութեան անգամ արժանի չեն համարուած, քեզի այնչափ կը հպարտացնեն »։

ՏԱՐԱԲԱԽՏ ԵՂԲԱՅՐԱԿՑԻՍ

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԻՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Վերջալոյս չէ, այլ՝ յաւիտեանական գիտեր

Վերջալոյս մը կը հասնի լուս՝ հոգւոյս մէջ,
 եւ որուն հետ
 Ծուէն ծուէն գուցէ տնհետ
 Յնդին իսպառ վարդ բաղձանքներս արժանէս :

Գ. ՇԱՀԻՆԵԱՆ

(Շարունակութիւն 7րդ թիւէն եւ վերջ)

Գրիգոր, ծաղկածին գարուններու խանձարուրդդ պատուելով
 ցուրտ պատանքի մը մէջ պարուրուեցար. եղովի քեզի տարաբախտ
 բարեկամս: Սիրտդ՝ կեանքի պատուքը անհունապէս զգացող այդ
 քնարը՝ ո՛վ գիտէ ի՞նչ պայքար մղեց մահուան անպարոյր խաւա-
 րին դէմ, որուն թեւերը դանդիւններուն վրայ կը բացուին: Խա-
 ւարամած հողակո՞յտ մը դառնալ, տարբազադրուիլ բնութիւն
 յորջորջուած գերեզմանին մէջ, անգամ մըն ալ շտեմնելու համար
 կենսաձոյլ գահը՝ Արեւը, որուն ծագումն ու մայրամուտը Արմաշու-
 բարձունքներէն կը դիտէիր յափշտակուած, ձեռքդ առած աստ-
 ուածներու երգարանը՝ Լիլիականը՝ պատառիկ պատառիկ գոց
 կը զրուցէիր Ապոլոնի կամ Փերոսի հրեղէն թռիչներուն տակ
 քաշուած: Հոմերոսի հրաշանկարած դիցունհիները աստուա-
 ծային սէրով գինովցուցին հոգիդ, որ ապալեր լեռան մը կա-
 տարը թառած արծիւի մը հանգոյն ապառաժներու լռութիւնը կը
 սիրէր, բայց դամբանի պապանձուած լռութիւնը չէ՛, այլ կեն-
 դանութեան: Մեծ բանաստեղծներու պատրաստած ամբրոսեան՝
 աստուածներու սնունդը ճաշակելէն ետք, իմաստասիրութեան
 դուռը բաղխեցիր որ բացուեցաւ: Օկիւստ Գօնդի, Ռենանի, Սքէն-
 սըրի եւ ամէնէն աւելի Թէնի գործերը հետազօտել սկսար անյա-
 գուրդ ու այնպէս քու մէջդ կազմեցիր կշռադատ քննադատու-
 թեան ոգին, զոր յետոյ Ֆ. Պրիւնըթիէօի հեղինակութիւնները ա՛լ
 աւելի ամրապնդեցին: Հա՞րկ է այլ եւս կցորդել թէ՛ Հայ մա-
 տենագրութեան ու լեզուին մէջ ներկուռ տաղանդդ արդէն իսկ
 փողփողիլ սկսած էր: Գրիգոր, գաղափարակի՛ց եղբայրս, այդ

գրական ու իմաստասիրական պրպտումները ինչո՞ւ միասին ու համահարգ կատարեցինք, մեռնելո՞ւ համար. ո՛չ, կեանքի աշունը դեռ հասած չէիր: Գեղեցիկ տարիներու քով մահ ջատուկը տեսնել, անդառնալի՞ է: Դեռ ի՞նչ յիշատակներ ջաղբի մը կամ թօնուտի մը պէս կը թափին ներքնաշխարհիս մէջ, զորս չեմ կրնար դասաւորել գիտակցութեանս հանդէպ, քանի որ վիշտը խիղբի մը պէս պարաւանդուած է արտասուածոր սրտիս վրայ, որուն ճաճանջները, հմայքն ու երազանքը ծծեց հոգիդ ոսկեթել թիթեռնիկի մը պէս, հողակոյտդ կը լուսազարդեն այժմիկ հեռի ծննդավայրէդ: Դուն, անմահ Պ. Դուրեանի սիրահարը, անոր երգած «Հառաչք»ը կամ «Աշնան տերեւը» չէիր եւ գուցէ բնաւին չէիր բաղձար ըսել:

« Հառաչ մ'եմ հեծող նոփներու մէջ սեւ

« Թափելու մօտ չոր առնան մեկ սերեւ »:

Առո՞ղջ մարմինով ու առո՞ղջ միտքով, խիզախ գաղափարներով ու խիզախ բեգունով, անխոնջ աշխատութեամբ ու անխոնջ գրելով սիրահար գեղեցիկին ու սիրահար Բնութեան, ի՞նչ հակապատկեր մահու ու կեանքի: Կեանքը դանդիւ կը դառնայ, ըսենք գլխահակ Աւետարանի անհաւատար բարոյականին, իսկ դանդիւր՝ կեանք: Է՛հ, բարեկամս մեռաւ, կամայ ակամայ լաւատես պէտք է ըլլամ, Լայպնիցի սկզբունքներուն փարիսկայրկեան մը, գէթ ողորացեալ մտերմիս սիրոյն, որուն յիշատակը սրտիս մէջ երկնային լոյսի մը փոխարկուելով կ'ողարկէ իր անձուկն ու արցունքը, բաղձանքն ու հառաչանքը վերի լոյսերուն, որ արտօսրի պէս կը պղպջան գիշերի կոպերուն մէջ. թերեւս Ունայնութեան արցունքներն Բն Մահուան խաւարին մէջ մկրտուած: Գրի՛գոր, դուն այս իրական պատկերը հոգիիդ մէջ տեսար ու երգեցիր:

Հորիզոն մը մեհենական լուսթեամբ

Ստուերամած սակայն անամպ

Կ'ընդլայնի հոն, եւ ո՛վ Ասուած,

Սնդուս երազս գաղտնիքներով արգաւանդ

Նոր արբունիի եկող աղջկան պէս հիւանդ

Հո՛ն կը մաշի կարօտներէ խաւսոցուած:

Իր ես-ին խորը թափանցող քերթողի յայտնութիւնները քանի մը տողերու մէջ կը բիւրեղացնէ, անհուն վիշտի մը տակ ընկճուած, որ է իր վիճակին յայտնի պատկերը: Այո՛, « Հորիզոն մը մեհենական լուսթեամբ » բացուեցաւ ներքնաշխարհիդ մէջ, ա՛խ երանի թէ այդ գուշակութիւնը ըրած չըլլայիր: Անդրշիրիմեան

հորիզոնին լռութիւնն էր այն, որ հրաշունչ լեզու մը տուաւ գըրիշ/դ: Գերազարգիւ վիճակի մը նշաւակ՝ կը գրեաւ:

Սնդուս երազս գաղսնիքներով արգաւանդ
Նոր արբուցնի եկող աղջկան տես հիւանդ
Հոն կը մաշի գաղսնիքներէ խարսոցուած:

Անդունդի մը պայթումը տեսնողի սարսափին յայտնութիւնը չէ՞ այս. խարտոցող կարօտի ու խանդաղատանքի հրդեհումէն վառուած սրտի մը եղերերգութիւնն է, որով հոգեկան աշխարհի գաղտնիքներու կայան մը ըլլալը կը հռչակէ Հայոց Չաթէրթընը՝ եթէ չեմ սխալիր, միայն սա տարբերութեամբ որ անգլիացի քըննադատ քերթողը յուսահատութենէն անձնասպան եղաւ, իսկ Գրիգոր, երեք ամիս անկողինի ծառայելով իջաւ յաւիտենականութեան անառաւօտ անկողինը, եթէ չեմ մոլորիր: Չաթէրթընի պէս ճշմարտասէր մը, սկզբունքի մարդ, որ իր կամքին սեղանին սըրբապղծութենէն զերծ պահելու համար, կը գոհարերէ կեանքը, եթէ հարկը պահանջէ: Որքան աւելի առաջ քայլ մը առնենք «Վայրկեան մը» հիասքանչ քերթուածին մէջ մահուան գուշակութիւնը այնքան կը ստուգուի:

Տակաւ կ'զգամ
Թե կը փեսուին կեանքիս վարդերն թերթ առ թերթ,
Որոնց վրայ վայրկեան մը մերթ
Ժպիտ յոյսով մ'անպատիւ
Ձի կաթիր:

Դժմիկ կասկած մը հին փուռ փուռ կը սողայ
Թե հասնումեն
Վերջ իղձերուս իմ, ո՞հ ամեն
Իսպառ պիտի չըդողդողայ.
Հոն անաւել երկինք մը իսկ ասմագուն
Թողմող սրտիս իբրեւ սուգի ֆոգ մ'անհուն:

Կեանքի արեւուն վերջալոյսը ակնյայտնի տեսնող ու դաւանող բանաստեղծի մը «Տրտունջն» է այն, սրտունջ մը, որ պայքար մըն է երկինքին դէմ, մահուան դէմ, ու սիրահարումը երկրին, որուն կեանքն է չօղափելին, թէեւ վիշտերու արցունքներովը կազմուած ծիածան մը ըլլայ այն: Կեանքի վարդերուն թերթ առ թերթ փետտուիլը ու անոնց վրայ արեւուն նշոյլին ժպիտ յոյսով մը անպատիւ չկաթիլը, դժնիկ կասկածի մը հոն փո՛ւշ փուշ սողալը, իղձերուն հատումէն վերջ, թողմող սրտին իբրեւ անհուն սուգի

քօղ մը, հոն անարեւ ու ամազուն երկինքի մը չդողդալը, կը պակուցանեն զինքը՝ այդ իսկ է պատճառը պակուցիչ լեզուով մը երգելուն իր մահը։ Աւերիչ հիւանդութեան յաղթանակն է այն, զոր կ'երգէ կսկծագին։ Իր կեանքի առկայծ կանթելին շիջումը կը գուշակէ վաղահաս փոթորկի մը չվոցին տակ։ Չարհուրանքի մէջ լուացուած, կը թաթխէ Գրիգոր իր գրիչը, իր կեանքի կանթելի ճենճերող իւղին մէջ, որ ալ չպիտի լուսազարդէր հայ գըրականութեան մէկ համեստ խորշը։ Մահը շօշափել ու այնպէս գրել կ'անմահացնէ գրիչը, Պ. Դուրեան անմահացաւ, ըստ մեզ, իր անմահ «Տըտունջ» ով, իսկ Գրիգոր Շահինեան իր «Վայրկեան մը» ով։

Կայծակնահար եղած մարդու մը վայնասունով, կը դողամ սա տենչին, պասուքին հանդէպ։

Եւ յանկարծ

Կ'ուռի լանջքս ծառաւով մը բոցարծարծ

Եւ ջիղերուս ըմբոսումովն խեղայեղ

Փնտռեմ սնդուս երազս, իղձերս ու խոհանք

Պաղասելով կեանք, կեանք, կեանք։

Կեանքի ծորան ծորան հոսող աղբիւրին առջեւ բերանարաց սպասող պառքեալ բանաստեղծը, հիւանդութեան երաժշտութենէն գոգցե՛ս կ'իյնայ անապատի մը հրահրուն աւազի կոհակներուն մէջ, ուր կեանք ովասիսը կը զգլխէ զանի, սիրոյ ու փառքի զուգախառնուած տենչանքին հետ միացած։ Ոգիներէն բռնուած հեծեալին պէս, անդունդին մէջէն «կեանք, կեանք, կեանք» կը մռնչէ և բարձունքները կ'արձագանգեն «կեանք, կեանք, կեանք»։ Յոյսերու, յակինթ երազներու յորձանք մը, սիրտէդ աներեւութացաւ, որոնց համար միայն կը փափախէր ու լռեց առ յաւէտ։ «Մնդուս երազ» դ՛մելամաղձիկ շեշտով մը կը հարցնես ու կը խուզես, ունայնութեան մէջ աստանդական ստուերի մը պէս։ Կեանքով զեղուն, աղերսագին «կեանք» կը հայցես կեանքի մայրէն՝ Բնութենէն։ տուաւ անքեզի։ պէտք էր ժլատ ըլլալ։ Լէօօբարտիի մը յոռետեսութիւնները տակաւ թեւ ու սլացք կը ստանան իմ մէջս, կը մռայլիմ, մազերս կը քստմնին, մարմինս կը փըշաքաղուի, այդ քու պասուքիդ հանդէպ, անձրեւի ծառաւ ամայի երէզի մը պէս վտառ վտառ (հողի պատառուածք) ըլլալով «կեանք» կ'աղաղակես։

Գրիգոր, կ'ուզես ու կը պրաղատիս այնպիսի բան մը, որ ո՛չ դրամի յարաբերական զօրութեամբը կ'առնուի, եւ ո՛չ ալ բնու-

թեան անհուն զօրութեամբը, որ մահուան քով յարաբերական կ'ըլլայ: Սիրասուն հոգեհատորիդ ու այնքան պաշտած կողակցիդ համար էր որ կեանքի դիւթական աղբիւրէն չէիր ուզեր հեռանալ: Եղկելի՛ւներ. եթէ անոնք ալ չմնային, թշուառութեան գահավէժին եզերքը հասան: Ա՞յս է վախճանը մտքի ու գրչի, սիրոյ ու կեանքի: Գերեզմանէն բացարձակ ի՞նչ կայ. — ես չեմ գիտեր: Տուէ՛ք Ողիմպոսի աստուածներուն նեկտարը՝ կեանքը, թո՛ղ անով գինովնայ, անոր ծարաւին է, ամայութեան մէջ բուսած երկնապոչ քարձ խոտին պէս: Տուէ՛ք անոր այդ նուիրական ըմպելին, իբրեւ ճշմարիտ հայր, իբրեւ արդիւնաւոր ուսուցիչ, իբրեւ գրագէտ, իբրեւ բանասէր, շատ պարտականութիւններ ունի, զոր դեռ նոր սկսած էր կատարել: Այդ ըղձանքը չէ՞ր որ վհկական բոցով մը կ'այրէր զքեզ. լսեցէ՛ք, անգունդին մէջէն կը պոռայ « Ապրիլ կ'ուզեմ դեռ, ապրիլ ու գրել »: Չարաբաստիկ ընկե՛րս, ընդարոյս խանդդ ամէն բարձր ու ազնիւ զգացումներու մէջ ցոյց տուիր, թէ՛ բեմին վրայ եւ թէ հրապարակագրութեան, թէ ընտանեկան յարկին տակ, թէ ընկերութեան մէջ: Կեանքէն յագուրդ չէիր զգար, Կէօթէի « Աւելի՛ լոյս » քաղաքակրթիչ հառաչքէն խարազանուած, բայց ահաւոր գահաւանդի մը առջեւ կանգ առիր, ա՛յ հոն նախատեսցիր թէ կեանքդ չարագուշակ ամպերու մէջ խանձարուրուած վերջալոյս մըն է. ծիւրեցար, ծնգեցար, կեանքդ չիթ առ չիթ տալ ուզեցիր, եղո՛ւկ, մահը երեք ամիս յածելով շուրջդ թաքթաքուր, վերջապէս զքեզ յափշտակեց ու տարաւ իր որջին մէջ անդարձ յաւիտեան, կրակը ինկած տեղը այրեց ու թնդացուց տիեզերքը, ուր՝ թերեւս ուրուականիդ հառաչքն ալ եղաւ « Կեա՛նք »: Ուռձալիր երիտասարդութեան մէջ հեռանալ աշխարհէն, դժբախտութեանց դրժբախտութիւնն է: Սիրարոյր վերմակէն ետք, հողի մահաբոյր ու անեղր վերմակը առնել, անհանդուրժելի իրողութիւն. էակ մը ըլլալէ ետք անէանալ, ահա բուն դժոխքը: Յոյներուն Հատէսը, Հրէից Շէօլէն, Գերմանացւոց Վալհալլան, եւայլն: Անուրջներու ծիածանին՝ կեանքին՝ ունայնութեան պատրանք մը ըլլալուն մարդկային յայտնութիւնն է. որուն ներքեւ մահու չափ ընկճուած, պահ մը ստոյիկեանի մը դառն համակերպութեամբ մը համակուած եւ եպիկուրեանի մը կենսամոլ կատաղութեամբ փութորկած կ'երգէ.

Վերջալոյս մը կը հասնի լուռ՝ հոգւոյս մէջ
Եւ որուն հետ
Ծուէն ծուէն գուցէ անհետ
Յնդին խապառ վարդ բաղձանցներս տարփաւես :

« Վայրկեան մը չտուաւ անոր Բնութիւնը՝ ապառուժ Սեղան, արգադիր նուէրներու համար միայն բացուած: Սէրն ու կեանքը Ունայնութեան սուտ ժպիտներն են եղեր: Գորգո՛ր, գրէ՛ վերէն թէ Հոգւոյդ մէջ հատնողը Վերջալոյս մը չե՛ր, այլ՝ յաւիտեանական գիշեր մը:

Օրժագիւղ, 22 Դեկտ. 1902

ՄԻՀՐԱՆ ԹԱՊԱԴԵԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴՍՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՁ

26. — Ունայնամիտ աղջիկ մը

Ի՞նչ ըսել է ունայնամիտ ըլլալ: Ունայնամիտ ըլլալ կը նշանակէ ոչինչ բաներու յարիլ, որ կ'զբօսցնէ փոխանակ հետամուտ լինելու կեանքի լուրջ եւ կարեւոր բաներու:

Ունայնամիտ աղջիկ մը կը ճանչնամ: Նա կ'երազէր միայն իր հաճոյքը եւ զարդարանքը: Կը խորհէր յաջորդ օրուան արդու-զարդի, չըջագայութեան, զբօսանքին վրայ: Երկուշաբթին եւ Ուրբաթը կ'անցնէր նախորդ օրերուն վրայ ցաւելով եւ պատմելով իր բարեկամներուն ինչ որ ըրած էր կամ ինչ զարդ որ ունեցած էր այն երջանիկ օրերուն մէջ: Արդ դպրոցի մնացած հինգ օրերէն ի՞նչ կը մնար իրեն ունեւելու համար: Օր մը, միայն օր մը: Ստուգիւ խիստ քիչ էր: այսպէս ալ թողուց դպրոցը առանց բան մը սովորելու:

Յետոյ ալ անձնատուր եղաւ ունայն բաներու. գէշ տանտիկին մը դարձաւ. գործածելով ընտանիքին ստակը արդուզարդի և սնտի բաներու համար. եւ իրեն պատճառով զաւակները թշուառութեան ու դժբաղդութեան մէջ էնկան:

Ունայնամտութիւնը միշտ յիմարութիւն է եւ երբեմն կը դառնայ ոճիր մը:

27. — Ի՞նչ բանի պիտանի եմ

Վարդուհին դպրոցական շրջանն աւարտեց՝ ուսման վկայականը առնելով: Իր ծնողքը հարուստ չեն, պէտք է որ ինք աշխատի, ի՞նչ պիտի ընէ: Շատ ամիսներ Վարդուհին մնաց առանց պաշտօն մը գտնելու, դերձակուհիի մը քով դրին կար կարելու հա-

մար, յետոյ նորաձեւութեան վաճառականի մը քով, յետոյ լուս-
ցարարի մը քով եւ դեռ ուրիշ տեղեր ալ: Այս գործերէն ոչ մին
կը շարունակէր. Վարդուհին դեռ չգիտեր թէ ի՞նչ բանի յար-
մար է, բայց իր ընտանիքը շատ պէտք ունէր անոր աշխատու-
թեան, որ բան մը շահէր:

Վարդուհին պէս մի՛ ընէք: Ձեր գտնուած հիմակուան տարի-
քին մէջ պէտք է խորհիք, թէ դուք ի՞նչ բանի յարմար էք: Դուք
ամէն մէկդ առանձին առանձին բաներու յարմարութիւն ունիք:
Երբեմն երբեմն պէտք է դուք ձեզ հարցնէք « Ո՞ր արհեստն է որ
սորվելու փափաք ունիմ: Անոր մէջ պիտի յաջողի՞մ: Ես ի՞նչ բա-
նի յարմար եմ »: Մտածեցէք անպէտ չլինիլ կեանքի մէջ, եւ
ճանչնալ թէ ի՞նչ դեր ունիք կատարելու իբրեւ պատուաւոր եւ
արի երիտասարդ աղջիկ:

28. — Չձանձրանալու համար

Մարգարիտ կը ձանձրանայ յաճախ եւ գրեթէ ամէն տեղ, բայց
պիտի ըսէք թէ դպրոց կ'երթայ եւ շատ դրօսանք եւ խաղալիք
ունի: Ուրեմն ինչո՞ւ կը ձանձրանայ: Օ՛հ, շատ պարզ է միայն
մէկ պատճառով մը, աշխատութիւնը չսիրեր:

Ձանձրութիւնը աշխարհ եկած է ծուլութեան հետեւանքով,
կ'ըսէ առածը, եւ այս ճշմարիտ է: Փորձեցէք օր մը կամ երկու օր
բոլորովին պարապ նստիլ, պիտի տեսնէք թէ ի՞նչպէս կը ձանձ-
րանաք: Ընդհակառակն աշխատեցէք շատ եռանդով, ժամերը շատ
արագ պիտի անցնին եւ երեկոյեան դէմ՝ պիտի ըսէք. « Միթէ՞
կարելի է որ այսչափ ուշ լինի, ի՞նչպէս այս օրը չուտ անցաւ »:

Չձանձրանալու համար ուրիշ միջոց մ'ալ կայ. սովորութիւն
ընել ըրածին վրայ խորհիլ, սրտով փարիլ գործին: Այսպէսով
ըրած աշխատութեան մէջ շատ հետաքրքրական բաներ երեւան
կուգան որ մինչեւ այն ատեն ուշադրութիւն գրաւած չէր, աշ-
խատիլը հաճոյք մը դառնայ եւ ձանձրութիւնը վտարուած է. —
Երբ օգտակար բաներու աշխատին, երբ իր պարտականութիւնը
հաճոյքով կատարեն, երբ մտածեն ու փափաքին շուրջն եղողները
երջանկացնել, այն ատեն երբեք չեն ձանձրանար:

Այն որ կ'ըսէ թէ « Կը ձանձրանամ », արդեօք կ'զգա՞յ, թէ՛
« Աւելորդ բեռ մ'եմ »:

29. — Մեղկութեան դէմ

Տղա՛ք, երբ պարտականութիւն մը, գործ մը ունիք կատարե-
լու եւ թէ այս պարտականութիւնը, այս այս աշխատութիւնը ձեզ
դժուար կը թուի, վաղուան մի՛ սպասէք կատարելու համար: Ձեր

մեղկութիւնը ձեզ պիտի ընէ, « Սպասեցէ՛ք, մի՛ շտապիք, շատ ձանձրալի է » : Եթէ այս զգացումին տեղի տաք՝ այն ատեն բնաւ չէք կրնար կատարել :

Ո՛չ, ո՛չ, մի՛ լինիք մեղկ, վարանոտ, դանդաղ գործի մը հանդէպ, որ քիչ մը աշխատութիւն կը պահանջէ : Ընդհակառակն, աշխատեցէ՛ք եռանդով եւ ուրախութեամբ կատարել ինչ որ ձեզ պատուիրուած է :

Արթննալնուդ պէս ելէք, առանց անկողիններնուդ մէջ ասդին անդին դառնալու, եթէ այնպէս ինէք՝ մեղկութիւն կը լինի : Փութով հագուեցէ՛ք եւ մազերնիդ սանտրած ժամանակ առանց նըստելու ասդին անդին, ինչպէս կ'ընեն անհոգ ու ծոյլ տղաք : Արագ քալեցէ՛ք դպրոց երթալու ատեն եւ հոն եղած ժամանակնիդ վայրկեան մը պարապ մի՛ անցնէք : Մեղկութեամբ կատարուած գործ մը միշտ դժուար կը թուի : Մարդ ինքզինքը մեղկութեան տալով, այլ եւս առաքինի ըլլալու յոյսը չունենար :

ԿՐՕՆԱԿԱՆ ՎԻՊԱԿ

ՓԱ. ՓԱ. Գ. Ը.

ՏԻԳԻՆ Փ. ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆԻՆ

Ազնիւ ընտանիքի մը միակ շառաւիղն էր Վիրգին : Հայրը, — մեր այն ժրաշան մարդիկներէն մէկը, իր բազմաճիւղ գործերուն մէջ անաչառ, կարգապահ ու մաքրատէր էր : Մայրը սակայն, գթութեան մարմնացումն էր, զի լոյսերու մայրին նըման, իր շուրջը գթութեան գործեր կը օփռէր : Փառաւոր արեւի նման, այս երջանիկ ամուսն ալ իրեն փառաւորութեանը մէջ սրտի սեւ բիծեր (հոգեր) ունէր : Հակառակ իրենց միրգալից սեղաններուն, ձմեռուան երկար գիշերները թախծութեամբ կը համակէր զանոնք : Իրենց տունին մէջ վրդովիչ լուծիւն մը կը տիրէր, գեղածիծաղ մանուկի մը դայլայլիկը անհրաժեշտ դարձած էր :

Նմանը քիչ անգամ տեսնուած ձմեռէն ետքը, գարունը, մայր բնութեան սիրուն ու գեղաշուք մանուկը ժպտիլ սկսած էր : Քիչ մը անդին, երգեցիկ թռչուններու խմբերգը, բնութեան զաւկին զարթօնքը կ'երգէին ներդաշնակ, որոնց հիմալիչ ձայնէն, երկինքի ձիւնաթոյր ամպի բարձիկներուն վրայ նիրհող բարի հոգիներուն

մէկուն պէս, Վիրգին յանկարծ կ'արթննայ, իր քնքոյշ գլուխը կաթնաթոյր բարձիկին վրայ պզտիկ մը ճօճելով, իր գեղեցիկ մարմինը կազդուրող քունը գեղեցիկ աչքերէն կը թոթվէ, ու նազելի դարձուած քով մը, իր կաթի պէս սպիտակ բազուկը քաշելով կապուտագեղ վերմակին վրայ կը տարածէ, որպէս թէ երկինքի կապոյտէն կէս մը դուրս մնացած հրեշտակի մը թեւն ըլլար այն։ Այն ինչ, բեհեզներուն մէջ պարուրուած պատշգամբ կ'ելլէ, ուրիշ բնութեան բիւր տեսարանները կը դիտէ աննայիչ։

Վարը, պարտէզին մէջ, բազմագունեան ծաղիկներու գեղեցկութենէն հմայուած, սանդուխէն վար կուգայ ու շրջան մը կը կատարէ պարտէզին մէջ, աներեւակայելի գուրգուրոտ վերաբերում մը ունէր ծաղիկներէն ամէնէ սկարին, ու չես գիտեր ինչպիսի հրաշալի բան մը կար մատներուն ծայրը, իր մէկ հպումէն հիւսնդ ծաղիկները կենդանութիւն կ'առնէին։ Իր գերագոյն հոգն էր անզաւակ մնալն, հետեւաբար ծաղիկներէն մէկ քանիներուն մասնաւոր անուններ դրած էր, ու արշալոյսին ու վերջալոյսին անոնց մօտ կը գեղգեղէր, ինչպէս իրական մայրը իր զաւակին զարթօնքն ու քունը կ'երգէ յար։

Կարկաջուն առուակը, որ ջինջ հայելիի պէս կը ցոլանար, Վիրգինի մայրը սովորութիւն ըրած է իր դիւթիչ գեղեցկութիւնը անկէ դիտելու։ Վարդի կարմրագեղ կոկոնները, առուակին մէջէն երկինքի գեղեցիկ լուսաւորներուն հմայքը կուտային. փոքրիկ թռչնիկի մը, որ վարդենիին վրայ գարունը կ'երգէր, անոր այդ դայլայլիկը Վիրգինին մայրը փղձկեցւց։ Հո'ն, իր յուզումներուն ներքեւ կբած, հազիւ լսելի ձայնով մը. « Տէ՛ր, երգիչ մըն ալ ինծի տուր » մրմնջեց։ Այդ լռիկ աղօթքը սակայն. որպէս թէ երկրի վրայ տառապող Սէր անուն հրեշտակի մը աղերսը ըլլար, երկինքի մէջ սո'ւր արձագանգ տուաւ։ Հազիւ աղօթողը ոտքի ելած էր, Յոյսը անոր սրտին մէջ արեւի մը պէս ծագեցաւ։

Տարին դեռ չբոլորուած, Վիրգինի ձայնը արձագանգ տալ սկսաւ. գեղեցիկ տունկի մը պէս արագ աճում մը ունեցաւ։ Մինչ Վիրգին կ'ուճանար, իր սիրական ծնողքն ալ կեանքի գենիթին վրայ խոնարհիլ սկսած էին։ Վիրգին հիանալի աղջիկ մըն էր, իր գեղեցկութիւնը, բարեմասնութիւններն ու ձայնը նկարագրելու բառեր կը պակսին մեզի. մէկ նախադասութիւնով, մարմնացեալ բարի հոգի մըն էր ան։ Լուրջ դաստիարակութիւն մը առնելէ ետքը, իր մօրը քով գթութեան գործնէր կատարելու կը պատրաստուէր։ Սքանչելի երգիչ մըն էր ան. երբ բաւական մեծցաւ ալ, շատեր անոր ձեռքը խնդրել փութացին, քանզի մեծ հարստութիւն կը խոստանար։ Շատերու ժխտական պատասխան տալէ ետքը,

գեղեցիկ նկարագրով օժտուած երիտասարդ մը անոր ձեռքը ուզեց. որով հաստատական պատասխան տրուեցաւ. նկարագիրը, աղքատ երիտասարդներու դրամագլուխը, բան մը որ շատ մը հարուստներու կը պակսի գուցէ:

Վիրգին ամէն ճոխութենէ ետքը, բարի ու աղքատասէր ամուսին մըն ալ ունեցեր էր: Այս նոր ամուլը, մէկ սիրտ, մէկ հոգի, իրենց հաճոյքը քարեսիրական գործերու մէջ կը գտնէին, ինչ որ երկինքի մէջ գանձ դիզել ըսել է: Մինչ ամէն մարդ ասոնց օրհնութիւն կը կարգար, յանկարծ յեղաշրջում մը յառաջ եկաւ ընտանիքին մէջ: Չարը նախանձեր էր անոնց. Վիրգինի սիրած քարի ամուսինը անկողին ինկած էր: Մահը քանի քանի պնդամիտ հիւանդին սնաքը խուժած էր, սակայն Վիրգինին անձնուէր խնամքներուն առջեւ խոյս տուած էր:

Վերջին գիշերն էր, ուր բժիշկներ ամէն բան Վիրգինի կը յայտնեն. սակայն ան չի վհատիր, իր յոգնութիւնները, հոգիին դառնութիւնները ու մահուան առթելիք վիշտերը սրտին մէջ խեղդեցնով, ամուսինը կը գգուէ ու անոր վերջին շունչին ատենը զոյգ մը արցունքի կաթիլներ կը դնէ ափին մէջ «Մօրս տար» կ'ըսէ: Անկէ ետքը Վիրգինի կեանքը գթութեան գիրք մըն էր: Ատեն մը ամէն աչքեր անոր գեղեցկութեան առջեւ կը խոնարհէին, իսկ հիմա՝ անոր վիշտերուն առջեւ, որովհետեւ վիրաւորուած հրեշտակի մը պէս տեսան զայն. տեսած էք արցունքի զաւակը:

ՀԵՐՄԷՍ

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Ս Ո Վ Ո Ր Ո Ի Թ Ի Է

ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍՍ

Գիշերի լուռ ու խաղաղ մթութեան մէջ ձիւնի ճերմակ ծրւէններ խօլ խաղերով կը թափթփին վար, և արդէն տանիքներու, ցուիքներու վրայ ու փողոցներուն մէջ ճերմակ միօրինակ խաւ մը փռուեր է: Այս գիշեր փողոցի մը երկու եզերքին վրայ չիմուած տուններէն, ուր հաւաքուեր են ամբողջը, հազիւ 4—5ին մէջ ճրագը կը վառի. որուն լոյսը թղթուած պատուհաններուն վրայ մեղմ կարմրուկ գոյն մը կը ձգէ, իսկ աղմուկները բարձրաձայն դուրս կը պոռթկան գաւառի խրախճանքով լեցուն մըթնորդանէ:

Ս. Սարգիսի բարեկենդանի գիշերն է:

Իհարսին սեւ առիքով սենեակին մէջտեղը նոր հարսի մը պէս քողքուած նստեր է. մթելին, անկողնին, կապերտին ու վերջապէս հացլաթին տակ ծածկուած սուսիկ բուսիկ այս հարսին բոլորտիքը շարուեր են ծեր մամիկէն մինչեւ նոր ոտք ելլող մանկիկը. ամէն դէմքի վրայ իր տարիքին յարմար ուրախութիւն մը կը փայլի:

Գիշերի յառաջացող ժամերուն հետ կը յառաջանայ սերախութիւնն ալ. այն ատեն եռաթել ջութակի մը և ֆեֆի մը առջեւ պզտիկէն սկսելով հետզհետէ մինչեւ ամէնէն մեծը կ'սկսի խաղալ. այնպէս ուրախ զուարթ գիշերը կը յառաջանայ մինչեւ ժամը 7-8:

Այս ուրախ մթնոլորտին մէջ սակայն ամէնէն աւելի աչքի կը զարնէր չափահաս աղջիկներու շրջանակ մը, որ բազմութեան պատճառով քիւրսիէն դուրս կը մնայ եւ, որ ինքզինքը երեքօրեայ ծոմապահութեան կը պատրաստէ, լուսցող երկուշաբթի օրուրնէ մինչեւ չորեքշաբթի կէսօր, յաճախ նոյն իսկ ամբողջ շաբաթ մը:

Ծոմ պահելը մինակ աղջիկներու վերապահուած չէ, ամէն սեռէ ու ամէն հասակէ կրնան պահել, սակայն առաջինները թիւով ամէնէն շատն են:

Խարբերդցին կ'ըսէ « Ծոմ կեցիր օր իւրմէթդ բացուի »:

* * Երկուշաբթին կը լուսնայ. դրացի ու աղգական աղջիկներ մինչեւ 10—15 հատ մէկտեղ տան մը մէջ կը հաւաքուին ուր իրենց ծոմապահութեան օրերը պիտի անցնեն:

Իրենց անօթութիւնը մոռցնելու համար երբեմն լուիկ մնջիկ ամէնքը ձեռագործով կ'զբաղին, երբեմն պողպատեքներով իրենց յարմար խաղեր կը խաղան: Զօթը (սագըզ) որ միշտ իրենց ծոմապահութեան տակ կը չաթրտայ, ծարաւին անցնելու համար կը գործածեն: Երկուշաբթի բաւական ազմիլի կ'անցնի, որովհետեւ տակաւին այնքան չեն զգար անօթութեան ճնշումը, այն գիշերը բաւական ալ կը քնանան բայց երեքշաբթին կը լուսնայ ու մինչեւ կէսօր ամէնէն զօրեղներն անգամ կ'ուժաթափին, կը լքեն հիւսուելիք գուլպան ու շինուելիք տանթէլան եւ կ'ընկողմանին քիւրսիին ոտքը:

Այս վայրկեանին ներս մտնողը լուռ մթնոլորտին մէջ տոգունութեան ջիղեր մը պիտի զգայ ու առաջին նայուածքով պիտի նշարէ անուշ նուաղութիւն մը. ա'լ չիկան ուրախութեան սուր ճիշերը, ա'լ չիկան կոյսի անուշ ճռուողիւնները. մինակ երբեմն լուռութեան մէջ, անօթութեան ճիրաններուն տակ գալարուող բարակ աղիքներուն կռրլտուքը որոշապէս կը լսուի:

Խօսելու անկարող այդ կոյս հոգիներուն աչքերէն քունը կար-

ծես կը կաթկթի եւ կարծես Մորբէոս այս բարակ արտեւանունքներուն վրայ թառելու վրայ է. բայց աւա՛ղ, քունը շատ հեռո՛ւ փախեր է այդ աչքերէն որոնք յառած սեւ առաստաղին հեռո՛ւն, տարտամ մնուչին ետին բան մը փնտռողի երեւոյթն ունին:

Վերջապէս գիշերը նորէն կը սփռէ իր սեւ քողը. անօթի փորով ու թմրած գլուխներով աղջիկները միշտ մի եւ նոյն վիճակին մէջ. չորեքշաբթիի լուսնալուն կ'սպասեն, սակայն այս գիշերի վայրկեանները ժամեր են դարձեր ու համրուած վայրկեանները՝ կարծես կը յամառին անցնելու: Ցուրտ հիւսիսակը կը փչէ կ'անցնի առանց կրնալ փարատելու թուխ ամպերը կապուտակ երկինքին ու իրեն հետ բերելու արեւելքի ճաճանջ մը նուազուն հայացքներ ըուն. տաժանելի այս կրկնակերկար գիշերը ակամայ կը հնազանդի կարծես բնական օրէնքին ու վերջապէս կ'սկսի պաղ ճերմակութեան մը տեղի տալ, որ իրեն հետ նոր առուգութիւն մը կը բերէ թմրած աղջիկներուն:

Այս առտու գրեթէ ամէն դուռ բաց ու պզտիկ աղջիկներ մէկ ձեռքերէն սթիլը կախած, միւսով ուսկուրայ մը բռնած կ'երթեւեկեն փողոցներուն մէջ. ծոմբացի համար կերակուրներ են որ կը ղրկուին, բայց միշտ պահոց ապուրներ:

Կէսօրին եկեղեցիին զանգակը կը հնչէ, ծոմ կեցողներուն համար է. փողոցներէն շարքերով աղջիկներ իրենց չալերուն տակ եկեղեցի կը դիմեն ուր Աւետարանի տակ նստելէ ետք կը հաղորդուին, Խաչմեր (1) կ'ընեն ու տուն կը դառնան ուր արդէն կիներու ակումբ մը չրջապատեր է քիւրսին, իրենց չրջանակին մէջ դարձնելով, յղկելով այս կամ այն աղջկան կամ տղուն բամբասանքը:

Հիւսիցնիկ

ՄԱՆՆԻՕՆ

ԳՊՐՈՑԻՆ Մէջ. — Գասարանին մէջ վարժապետը կրօնական դասի ատեն աշակերտներէն մէկին կը հարցնէ թէ « Սամկիսոն ինչով սպաննեց Փղշտացիները »: Աշակերտը կը վարանի. վարժապետը անոր օգնելու համար կգակը կը բռնէ, որու վրայ աշակերտը անմիջապէս կը պատասխանէ.

— Իշու կգակով, վարժապետ:

Թարգմ. ԱԿԻԻԼԻՆԷ

Գրիգոր պզտիկ տղայ մըն է, անոր համար կանուխ կերակուր կը կերցնեն ու կը պառկեցնեն, որովհետեւ հայրիկը ուշ տուն կը դառնայ:

— Երբ որ պէխեր ունենաս, ըսաւ օր մը մայրը Գրիգորին, այն ատեն հայրիկին հետ սեղան կը նստիս:

Իրիկուն մը մինակ ձաշ ըրած միջոցին կատուն Գրիգորին քովը եկաւ:

— Դուն պէխեր ունիս, ըսաւ տղեկը, գնա՛ հայրիկին հետ կերակուր կեր:

(1) Քահանան խաչը ջուրին մէջ Խոթխելէ վերջ, ծոմ կեցողներուն՝ երեսին քսելուն « Խաչմեր ընել » կ'ըսեն:

ԱՇԽԱԱՐՀԻՍ ՆՇԱՆԱԻՈՐ ՆԿԱՐԻՉՆԵՐԸ

ՍԱԽՉՈՒՆ ՄԻՆՉՍԻ ՄԵՐ ՕՐԵՐ

Իսալացի Նկարիչներ

Լեօնար քր Վինչի. — Մնած է Ֆլորանսի մօտ 1452ին և Ամպուլզի մէջ մեռած 1519ին: Կասարեալ հանճար մը՝ մի քանի արուեստներու մէջ, մասնաւորապէս նկարչութեան մէջ: — Հին



նկարչութեան անհրաժեշտ եղած ամբողջ կատարելութիւնները, — թերեւս պզտիկ չըջանալի մը միայն եղած ըլլայ այդ — իր մէջ ամբողջած է, ինչպէս գծագրութեան, լոյսի եւ նկարի մը քան-

դաճներուն գիտութիւնը, ճշդիւ ու անպաճոյճ ձեւի պատկերացումը, արտայայտութեան եւ մարդկային դէմքերու խորհրդաւոր առուգութիւնը եւ իւրացումը. « գեղեցկութեան » կատարեալ տիրացումը, բայց իր գոյներուն մէջ կենդանութիւն չկայ: (Գործերը՝ Ս. Ընթրիքը, Ժագօնտ, Ս. Կոյսը, Յիսուս Մանուկը ևլն.):

Յրանչիւս. — Պօլօնէի մէջ ծնած 1450ին և հոն մեռած 1517ին, իր ժամանակի Պօլօնական Դպրոցը ամենափառաւոր աստիճանի մը հասցուց: Թէեւ վենետիկեան ճաշակէն ու Բէրլիժէնի մտատիպարէն ազդուած է, բայց իր անձնական ոճն ունեցած է. նկարներու մէջ ինքնատիպութիւն մը եւ համեմատութիւններուն մէջ իմացութիւն մը՝ ահա զինքը նշանաւոր ընող յատկութիւնները: (Գլխաւոր գործերը՝ Ս. Սերաստիէն, Յովսէփ Արեմաթացի և երեք Մարիամները):

Յրա Պարթօլօմէո. — Ծնած Սալիկեանօի մէջ 1457ին, Կ'ըսեն թէ ինքն հնարած է փայտէ մարդիկները որոնց վրայ հագուստներ անցնելով նկարիչներն իրր օրինակ կը գործածեն: Եւ միշդ ատոր օգնութեամբն է որ գծած է ճոխ ու զարդարուն հագուստներ: Ընտրած գոյները շատ սիրուն են և քանդակները շահագրգիռ ու ճարտար (Ս. Մարկոս, Ֆլօրտնսի Ս. Պաշտպանները):




Միֆայէլ ԱԳՆԵԼՅՈ. — 1475ին ծնած Քարբէզի դղեակին մէջ, և մեռած Հոռոմի մէջ 1564ին: Արուեստին ամենէն մեծ երրապետը՝

նկարիչ, ճարտարագետ ու քանդակագործ: Անհրեւակայելի հանճար մը ուր, բոլոր գեղարուեստներուն մէջ ալ ընդունուած ամբողջ օրէնքները ոտից կոխան ըրաւ և գերագոյն հեղինակութիւնով մը մարդկութենէ գերիվեր տիպարներ ստեղծեց: Խորաքնին անդամագէտ, խանդավառ նկարիչ, անսայթաք իր յանդգնութիւններուն մէջ, իրեն ամէն նկարներուն մէջ անմեղանջ ու խիստ վեհութիւն մը դրած է: (Գործեր՝ Բիզայի պատերազմը, Վերջին դատաստանի որմնանկարը):

Թարգմ.

Չ. Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ


ՆԿԱՐՀԱՆԵԼՈՒԿ



Ահա այժմ, բայն ո՛ւր է հովուհին

«Հանրագիտակ»ի 4րդ թիւին մէջ առաջարկուած թուաբանական խնդիրը լուծեցին՝ Վահրամ Գարագաշեան, Ա. Տէր Մատթէոսեան, Յարութիւն Ս. Օհանեան:

Ինչպէս կը տեսնուի լուծումէն՝ միեւնոյն գծին վրայ գտնուող թիւերուն գումարը 45 ի կը հաւասարի, իսկ գիծերուն ծայրերը, կամ մէջտեղները գտնուած թիւերուն գումարը՝ 75 ի:




Վշտակիր Այրի Տիկին Գ. Շահինեան իր ողբացեալ ամուսինին երկերէն մաս մը շրկած ըլլալով մեր համակրելի աշխատակից Միհրան էֆ. Թապագեանի, այսուհետեւ մաս մաս պիտի հրատարակենք անոնցմէ :

«Հանրագիտակ»ի յաջորդ թիւին համար՝ Մ. Թապագեան էֆ. զատեց սիրուն ոտանաւոր մը, անտիպ, և որ ձօնուած է Օր. Ա. Ե.ի :

«Հանրագիտակ»ի առաջին գրական մրցումը՝ ԱՆՏԱՌԸ, փակուած ըլլալով, յաջորդ թիւին պիտի հրատարակենք Պարոյր էֆ. Քէչեանի քննութեան արդիւնքը, մասնակցողներուն անուններովը և առաջին հանդիսացողին գրութիւնովը :

Սոյն պատկերին մէջ կը տեսնէք 16 տղու գլուխներ որոնց դէմքի արտայայտութենէն յայտնի է որ՝ ութը հատը կուլան, իսկ մնացեալ ութը հատը կը խնդան :

Այս գլուխները իրար խառնուած են հոս. կ'առաջարկենք անանկ մը ծալլել թուղթը որ մկրատի մէկ հարուածով լացող տղաքները խնդացողներուն գլուխներէն զատուին :



ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Խմբագրութեան, Բաժանորդագրութեան և ո' եւ է գործառնութեան առթիւ հարկ եղած դիմում, գրութիւն կամ նամակ պէտք է ուղղուին միմիայն

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐՍԱՆԻ

որ միակ վարիչն ու պատասխանատուն է թերթին :

ԽՄԱՐԱՊԵՏ - ԱՐՏՕՆԱՏԻՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻԶ - ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐՍԱՆԻ

Պապը Ալի ճատտէսի, Թիւ 38, Իգտամ լրագրին դէմ

ՀԱՅԿԱՅԻ ՕՇ ԳՐԱՐԱՆ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱՔԱՓԱԿԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՅ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 20-24 էջէ բաղկացեալ. եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վանառականացի, 24 էջ.

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Է

Պոլսոյ համար

30 դրուշ

Գաւառաց »

35 »

Արասահման

45 »

Հատը

30 փարայ

Առաջնորդ Վանառականացի 12 տետր զաւտանել ուզողը պէտք է վճարէ 12 դրուշ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Սանդամուր

Ասաբազար, Աշոտ էֆ. Պազպազեան

Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պօղոսեան

Դօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւրկէրեան

Նւրոկիա, Սաչիկ էֆ. Գ. Թաշեան

Նրզնկա, Պարոյր էֆ. Արզուման

Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան

Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան

Թեֆրսաղ, Ասատուր էֆ. Արսէնեան

Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան

Կեաւիա, Նրուանդ էֆ. Նրկաթեան

Կիւրին, Գրիգոր Մ. էֆ. Սանդամուր

Հալեպ, Ս. էֆ. Ամատեան

Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան

Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշեան

Մարաշ, Արժ. Տ. Նէրսէս ԲՆ. Շահինեան

Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան

Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան

Պարսիզակ, Ստեփան էֆ. Մակարեան

Սամսոն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան

Սրվազ, Մանուկ էֆ. Պէյլէրեան

Սիւմհաճի Բեյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան

Վեզիր Բեյ » » »

Տիւրքիա, Լեւոն էֆ. Սրապեան

Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան

Բանի մը տեղերէ, ուր Գործակալ չունինք. կը հարցնեն թէ Հանրագիտակի բաժնեգինք եւ կամ մանր յանձնարարութիւններու փոխարժէքը ի՞նչպէս ղրկելու է:

— Ամէնէն պարզ միջոցն է Օսմ. նամակադրոշմ դնել նամակին մէջ եւ նամակն ալ առաջովագրել (քանիւս բնէ): Նամակագրոշմ կրող նամակները ապահովագրելու անհրաժեշտ է, որովհետեւ մեր ձեռքը չհասած ժամանակ, երբէք պատասխանատու չենք:

Հատը 30 փարայ